

ԿՐՈՆԱԿԱՆ

2.

(Ճաշու առարկիական ընթերցումներու առթիւ
կիրականորայ խոկումներ)

ԿԵԱՆՔԻ ԿԱՆՈՆ

ԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԻՄՆ

(Թ. ԿԻՐ. ԶԿՆԻ ԽԱՅԳԼԵՐԱՅԻ)

(Եփես. ե. 15—33)

Անհրամեշտ է որ մարդս իրեն համար իր-
ւո կեանքի փանտ ունենայ միշտ բարձր սկզբ-
րուէր մը. ու լաւագոյն է որ, ամէն բանէ աւել-
ի, ճշմարտութեան յարացոյցը լինի անխառն Այս
կերպով է որ պիտի կարենանք ճանչնալ Աստու-
ծոյ կամբը, հառադայի՜ որ միայն կրնայ լու-
սաւորել մեր համբան այն մասի բազմին մէջէն,
որ աշխարհն իսկ է։

Անտէք որ այդ կերպով կ'ուզեն իրենց ըն-
թացքը, ներքնապէս կը պայծառանան իմաս-
տութեամբ մը՝ որ կեանքի ամէն մէկ պատահու-
թեան մէջ պարտականութիւն մը կատարելու ա-
ռիւթը պիտի ցուցնէ միշտ իրենց։

Ու այսպէս ապրելով, ստուգապէ՛ս կը տի-
րանանք կեանքին, արժանիքով գնելով մամա-
նակը, և ո՛չ թէ ընդունայն ժամափառութեամբ
անցընելով մեր օրերը պատրանքներով լեցուն
այս զոյութեան մէջ, ուր զազափաբի մարդուն,
աւելի ճիշդ՝ բրիտանիկն մէն մի քայլին առջեւ
շարունակ կը ցցուին մեծ ու բիրտ արգելքներ։

Պիտի հասկնանք այն ատեն թէ ո՛րքան
սուտ ու անտիկ են հեշտ կենցաղի մը խոտացած
փայլերները, և թէ, ընդհակառակն, ի՛նչ հոգե-
պարար քաղցրութիւն կայ Աստուծոյ զգացու-
մով գրաւուած և կրօնքին շունչովը ոգեւորուած
պարապուններու մէջ։

Այսպիսի մտադրաբար մը առաջնորդուած
անհատը երջանիկ մարդն է երկրի վրայ. իսկ երբ
այս կարգի ներշնչութեամբով և այդ ոգիով կ'առ-
ջուի տուն մը, ընտանեկան բարոյականն է որ
իր հիմը կը գնէ հոն, երջանկութեան բոյնի մը
մէջ։

Ամէն բանի մէջ, բայց մանաւանդ ընտա-
նեկան կեանքին մէջ, որ կորիզն է ընկերային
կեանքին, խաղաղութիւնն է ազդիւր ամէն բա-
րութեան. ու խաղաղութիւնը կ'իրականանայ,
երբ մարդիկ կրնան բարձրագոյն զգացումի մը
շուրջը, որ բրիտանիկն համար Աստուծոյ եր-
կուզը պէտք է ըլլայ, գիշումներ ընել իրարու
կամ, առաքեալին բացատրութեան համեմատ,

«հնազանդել միմեանց», այսինքն անխորի հըշ-
դութեամբ կատարել իրարու հանդէպ առանձ-
նած իրենց պարտականութիւնները։

Այս պէտք է ըլլայ կեանքի գերազանց կա-
նոնը՝ ամուսնական յարաբերութեանց մէջ։

Այն ու կինը իրենց առնչութիւններուն
ուղղիչ սկզբունքը պարտին ընել Աստուծոյ եր-
կուզը՝ Բրիտանի և իր եկեղեցին յարաբերու-
թիւններուն երկուցած հայեցողութեամբը։ — Ա-
ստուծոյ այդ պատկերին, անհասկնալի պիտի ըլ-
լար ամուսնական կեանքի խորհուրդին մեծու-
թիւնը։

Այլը պարտաւոր է սիրել իր կինը այնպէս
ինչպէս Բրիտանոս սիրեց իր եկեղեցին, այսինքն
մասնաւորապէս։ Անոր հանդէպ իր պարտականու-
թեանց չափանիշը պէտք է ըլլայ անձնութեան
թիւնը։ Ու կինը այնպէս պէտք է հնազանդի իր
ամուսինին, ինչպէս եկեղեցին՝ Բրիտանոսի, այ-
սինքն հաւատքով և անարատ կեանքի առաքի-
նութեամբ։

Անձնութեան և հնազանդութեան. ա-
ռաջինը սուրբ է և վեհ, երբ կը կատարուի գի-
տակից սիրոյ իմաստութեամբ. ու երկրորդը յա-
ւելա հեռի է նմանելէ ծառայութեան, երբ այն-
պէս կը կատարուի սրտագին յոժարութեամբ և
համոզումով։ — Այս պայմաններով իրականացած
ամուսնական կենակցութիւն մը ո՛չ միայն շեղ-
մաներ առն և կնոջ հաւատարմութեան մասին
Առաքեալին այլոք (Կաղ. Գ. 28) տարօրոյցած
սկզբունքը, այլ ընդհակառակն աւելի կը շեշտէ
զայն. զի այն ու կինը, երկարանշիւրը իր սե-
ռին էութեանն ըլլալով լաւագոյն շնորհները հա-
մանման ոգիով զոհարեցելով իրարու, կը հա-
ւատարմին Աստուծոյ սիրոյն առջեւ, իրենց երկու-
ութիւնը ունայնացնելով սրտի և հոգւոյ ան-
բաժանելի միութեան մը մէջ, որ է հիմն իսկ ըն-
տանեկան բարոյականին։

Ամուսնական կեանքի մասին Բրիտանոսն ու-
թեան մշակած այս սեռութիւնը Աւետարանով
փերանորոգուած մարդկութեան ամէնէն կարե-
ւոր ու պատուարեք յաղթանակներէն մին է։
Պէտք չէ թողուլ որ գոհնիկ և հիմնաւոր բարբի
սկզբունքութիւնները պարտեն անոր սրբութիւնը։

Դանիէլ

Թ. Ե. Գ.

